«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳԻՐ

Քաղաքականության համառոտագիր

ԻՆՉՊԵ՞Ս ՊԱՏՐԱՍՏԵԼ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՈՐ ՉԱՓՈՐՈՇՉԻ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱԲԱՐԴ ԲԱՆԱԼԻՆԵՐԻՑ ՄԵԿԸ

Հեղինակ՝ Էլինա Արիստակեսյան

2024

Սույն համառոտագիրը պատրաստվել է «Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագրի շրջանակում: Ծրագրի նպատակն է բարելավել Հայաստանում ֆորմալ և ոչ ֆորմալ քաղաքացիական կրթության որակը՝ խթանելու Հայաստանում երիտասարդների հանրային ներգրավվածությունը և ժողովրդավարական գործընթացները: Ծրագիրը ֆինանսավորվում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) կողմից և իրականացվում է «ՓԻ-ԷՅՉ Ինթերնեշնլ» կազմակերպության ու իր ենթադրամաշնորհառուներ «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ-ի, «Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-Սիվիտաս» ՀԿ-ի և «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Ծրագրի մասին լրացուցիչ տեղեկություններ հասանելի են այստեղ՝ https://www.facebook.com/ArmCivics4Engage:

Համառոտագրի հեղինակը «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ-ի կողմից 2024թ. կազմակերպված «Երիտասարդության ուժը՝ երիտասարդական քաղաքականության մեջ» ամառային դպրոցի շրջանավարտ է:

Համառոտագիրը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի առատաձեռն աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում հեղինակը, և այն պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ-ի կամ Միացյալ Նահանգների կառավարության տեսակետները:

Ուսուցիչների վերապատրաստման դերը հանրակրթական բարեփոխումներում

2021 թվականին Հայաստանի հանրակրթության համակարգում հաստատվեց նոր չափորոշիչ, որը նպատակ ուներ հիմք դնելու կրթության զարգացման նոր դարաշրջանին: Այս փոփոխությունն ուղղված է ուսուցման բովանդակության վերափոխմանը, որը շեշտադրում է ստեղծագործական մտածողության, գիտելիքի խորացման և նորարարական մոտեցումների կարևորությունը: Նոր չափորոշիչը նախատեսում է կրթության մեջ ձևավորել միջավայր, որտեղ գիտելիքը փոխանցվում է ոչ միայն որպես փաստերի համախումբ, այլև՝ որպես անհատի հոգևոր և մտավոր աճի գործընթաց:

Եթե նախորդը հիմնված էր գիտելիքների վրա, ապա հանրակրթության պետական նոր չափորոշիչը ելնում է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումից և, ի թիվս այլոց, սահմանում է շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները՝ ըստ կրթական աստիճանների, ուսումնական բնագավառները, հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, ուսումնական պլանի և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքները, սովորողների գնահատման ձևերը, այսինքն այն ամենն, ինչով առաջնորդվելով, կրթության առանցքային դերակատարները, ներառյալ ուսուցիչը, պիտի ուղղորդվի՝ ձևավորելու սովորողի կարողունակությունները:[1]

Պետության կողմից ակնկալվող սովորողի կարողունակությունները ձևավորելու գործընթացում **առանցքային դերակատար է ուսուցիչը**, ով շարունակում է մնալ գիտելիքներ և հմտություններ սովորողին փոխանցելու հիմնական խողովակը Հայաստանում: Սակայն, կարողունա՞կ է արդյոք այսօրվա ուսուցիչը որակյալ և արդյունավետ ուսուցողական գործընթաց կազմակերպելու համար: Դիտարկենք կոնկրետ օրինակ: Աշակերտի կարողունակություններից մեկը թվային և մեդիա կարողունակությունն է. «սովորողները տիրապետում են մեդիագրագիտության կանոններին ու հմտություններին. պատկերացնում են մեդիայի աշխատանքը և դերը ժողովրդավարական հասարակությունում, կարողանում են կողմնորոշվել տեղեկատվության հոսքերում, գտնել և տարածել տեղեկություններ, քննադատորեն վերլուծել դրանք, գնահատում են մեդիայի ազդեցությունը սեփական և այլոց արժեքային պատկերացումների, դիրքորոշումների և գործողությունների վրա: Թվային մեդիայի օգտագործման հնարավորությունների կողքին գիտակցում են նաև դրանց հետ կապված ռիսկերը, ունակ են գնահատելու և վերափոխելու իրենց վարքը թվային աշխարհում՝ անվտանգության, պատասխանատվության և էթիկայի տեսանկյունից: Տիրապետում են մեդիա արտադրանք ստեղծելու տեխնիկական և ստեղծագործական հմտություններին, ինչպես նաև կարողանում են արդյունավետորեն կիրառել մեդիա գործիքները

[1] Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2021 թվականի փետրվարի 4-ի N 136-Ն որոշումը Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 8-Ի N 439-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին. https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788. Վերջին անգամ դիտվել է 22.10.2024

քաղաքացիական իրավունքների իրացման ու ժողովրդավարական գործընթացների մասնակցության նպատակով»[2]:

Այսպիսի սովորող կրթելու համար ուսուցիչն ինքը նախ և առաջ պետք է ունենա թվային և մեդիա կարողություններ, լինի մեդիագրագետ, որպեսզի սովորողին կարողանա փոխանցել թվային և մեդիա կարողունակություն ձևավորելու համար անհրաժեշտ գիտելիք և հմտություն: Իսկ երբ ուսուցիչը սոցիալական հարթակներում չճշտված տեղեկատվություն է տարածում, ինչպե՞ս է դա ազդում իր իսկ հեղինակության և պրոֆեսիոնալիզմի հանդեպ հանրային վստահության վրա: Այսօր սոցիալական մեդիա հարթակներում ուսուցիչների կողմից կատարվող նման բաց գրառումները հազվադեպ չեն.

«Աստվածաշնչի մեջ կասկածելի տեղեկատվություն կա, ումից կարող եմ ճշտել որպես 2-րդ աղբյուր»:

«Ինձ WhatsApp-ով նամակ ա գալիս, որ ես շահում ունեմ, ու պետքա իրանց տրամադրեմ քարտիս տվյալները և հեռախոսիս եկած կոդը, որ կարողանան ինձ փոխանցել իմ շահումը, իսկ այդ ամենը տրամադրելուց հետո հասկացա որ քարտիցս դուրս է եկել ողջ գումարը, որը նախատեսված է ամուսնուս ծմեռային անվադողերի համար»:

Դժվար չէ կռահել, թե որքանով աշակերտները և ծնողները կվստահեն այսպիսի գրառումներ կատարած ուսուցչին և նրա դասավանդման արդյունքներին:

Ուսուցիչների վերապատրաստման նպատակներն ու իրականությունը. տեսական մոտեցումից դեպի գործնական արդյունք

Ո՞րն է վերոնշյալ ուսուցիչների ընկալումները, արժեքները, դասավանդման մեթոդաբանությունը վերափոխելու **գործիքը**: Հիմնական գործիքներից մեկը շարունակում է մնալ **ուսուցչի վերապատրաստումը**, իր առավելություններով, թերություններով, դժվարություններով:

Իսկ ինչպիսի՞ պահանջներ է ներկայացնում պետությունն ուսուցչին վերապատրաստելու համար: Այսօրվա դրությամբ ՀՀ-ն առաջարկում է բավականին տպավորիչ կանոնակարգման

[2] Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2021 թվականի փետրվարի 4-ի N 136-Ն որոշումը Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 8-Ի N 439-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին. https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788. Վերջին անգամ դիտվել է 22.10.2024

և ինստիտուցիոնալ շրջանակ՝ սահմանում է ուսուցչի մասնագիտական չափանիշները[3], վերապատրաստման կարգը[4], ուսուցիչների վերապատրաստումն իրականացնելու համար մշակված մասնագիտական կարիքների գնահատման համակարգը, ուսուցիչների վերապատրաստման չափորոշիչը և օրինակելի ծրագիր[5], վերապատրաստող երաշխավորված կազմակերպությունների ցանկի ձևավորման կարգը[6]:

Ուսուցիչներն այսօր վերապատրաստման բազմաթիվ հնարավորություններ ունեն. պարտադիր վերապատրաստում, որն առաջարկում են ԿԳՄՍՆ կողմից երաշխավորված կազմակերպությունները, ինչպես նաև միջազգային և տեղական տարբեր կազմակերպությունների կողմից առաջարկվող վերապատրաստումներ, որոնց մասնակցությունը կամավոր է: Այսպես, **ըստ ԿՏԱԿ-ի՝ 2021-2023** թվականներին վերապատրաստվել է **40.000[7] ուսուցիչ**: Ամենաշատ թվով մասնակցությունը եղել է **2021 (11219) և 2022 (11576) թվականներին**, որը բացատրվում է նրանով, որ դրան նախորդել է ԿՈՎԻԴ-19 համավարակը: Համավարակով պայմանավորված՝ այն ուսուցիչները, որոնք պետք է վերապատրաստվեին այդ ժամանակահատվածում, վերապատրաստվել են դրան հաջորդող տարիներին:

Թվում է, թե բոլոր կողմերը գոհ պիտի լինեն գործընթացից, մինչդեռ մամուլը պարբերաբար լուսաբանում է ուսուցիչների դժգոհությունները վերապատրաստման գործընթացից, հատկապես դրա որակից և իրենց իրական կարիքներին դրանց անհամապատասխանությունից:

Թվային և մեդիա կարողունակության օրինակը շարունակելով՝ 2023-2024 թթ. ՀՀ մարզերում և Երևանում իրականացվել է **մեդիագրագիտության 16 դասընթացների շարք**՝ որոնց հիմնական բովանդակությունը ներառում է՝ (ա) մեդիագրագիտության տեսություն, ցույց տալու, թե որքան է նման գրագիտության բարձր մակարդակն անհրաժեշտ ուսուցչի հետագա գրագետ գործունեության համար և (բ) աշխատանքային գործիքներ՝ ինչպես կարելի է մեդիագրագիտության մակարդակը բարձրացնել դասարաններում: Վերապատրաստումների ընթացքում ուսուցիչները սովորում են կարևոր հմտություններ, օրինակ՝ նորությունների և տեղեկությունների աղբյուրների վերլուծություն, որի արդյունքում կարողանում են տարբերել հավաստի աղբյուրները՝ կեղծ կամ մանիպուլատիվ բովանդակությունից: Վերապատրաստողները սովորեցնում են ուսուցիչներին կիրառել մի շարք մեթոդներ, որոնք վերջիններս կարող են փոխանցել նաև աշակերտներին, օրինակ՝ (1) աղբյուրի ծագման վերլուծություն՝ գնահատելու՝ արդյո՞ք աղբյուրը հուսալի է, (2) հետադարձ որոնում նկարներով՝ արդյո՞ք տվյալ պատկերը օգտագործվել է այլ համատեքստում և (3)

[3] ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի օգոստոսի 5-ի N 30-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 168-Ն հրաման

[4] Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության՝ հերթական ատեստավորման ենթակա ուսուցչի վերապատրաստման կարգ. https://www.arlis.am/documentview.aspx?docid=173569. Վերջին անգամ դիտվել է 17.10.2024

[5] ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի ապրիլի 30-ի «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 7-ի N 1162-Ա/2 հրամանը Հանրակրթական հիմնական հաստատության՝ հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման չափորոշիչը և օրինակելի ծրագիրը հաստատելու մասին. https://escs.am/files/files/2021-03-17/bb274a81d92a24f1f2c544a4169c92f7.pdf). Վերջին անգամ դիտվել է 22.10.2024

[6] https://www.arlis.am/documentview.aspx?docid=150851. Վերջին անգամ դիտվել է 17.10.2024

[7] Տվյալները տրամադրել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը:

տեղեկատվության խաչաձև ստուգում՝ համեմատելով տարբեր աղբյուրներում ներկայացված փաստերը:

Այս վերապատրաստումներից ակնկալիքն այն է, որ փոխանցված գիտելիքն ու հմտություններն ուսուցչին թույլ են տալու ավելի գրագետ և վստահելի տեղեկություններ փոխանցել աշակերտներին, միաժամանակ նրանց սովորեցնելով՝ լինել ավելի քննադատաբար մտածող մեդիայի սպառողներ:

Նման վերապատրաստումն անշուշտ ուսուցչին տալիս է գիտելիք և գործիքներ, որոնց նա թերևս «տիրապետում է», օրինակ՝ կարող է գործընկերներին պատմել «տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների հիմունքների» մասին[8]: Իսկ այս ամենից հետո ի՞նչ է նա «կարողանում» անել այն ցանկից, որն առաջարկում է չափորոշիչը: Այս հարցին բավականին բարդ է հավաստի պատասխան տալ, քանի որ վերապատրաստումն ավարտվում է վերոնշյալ բաղադրիչներով՝ տեսություն և գործիքներ: Դասընթացներում ներառված չեն հնարավորություններ՝ դասընթացի ավարտից հետո, հետագայում լսելու ուսուցիչների կարծիքներն այդ գործիքների կիրառման մասին և հետադարձ կապով հասկանալու, թե ինչ խնդիրներ են առաջանում դրանց կիրառման ընթացքում, ուսուցիչն ինչպես է արձագանքում այդ խնդիրներին, ինչ աջակցության կարիք ունի, ումից կարող է աջակցություն ստանալ անհրաժեշտության դեպքում:

Այսպիսով, ցանկացած վերապատրաստող կազմակերպություն ուսուցչին տալիս է տեսական գիտելիք և հիմնական մեթոդաբանական գործիքների ցանկ, բայց վերջինս չի կարող այն օգտագործել այնպես, ինչպես հարկն է: Վերոնշյալ օրինակների հիման վրա կարող ենք եզրակացնել, որ չունենալով փոխանցված գիտելիքն ու հմտության մասին տեղեկությունը գործնականում և հետևողականորեն իր դասարանում կիրառելու, ինչպես նաև կիրառման շուրջ հետադարձ կապի հնարավորություն, խզում է առաջանում տեսության և կիրառման մեջ: Ուսուցիչն էլ, ունենալով դասավանդման արմատավորված սովորույթներ, շարունակում է այնպես, ինչպես անում էր մինչ այդ վերապատրաստումը և նույնիսկ նոր գործիքներն է ադապտացնում և կիրառում հին սովորութների համաձայն: Իսկ ներկայում **մոտ 39,000[9] ուսուցչից** շուրջ կեսը 50 տ-ից բարձր են, որից շուրջ 2000-ն ունի 8 և ավելի տարվա մանկավարժական ստաժ, այսինքն՝ արմատավորված սովորույթներ և մանկավարժական վարք:

Մեկ այլ խնդիր է նաև ուսուցչի մոտիվացիան. արդյո՞ք այն ժամանակն ու ջանքը (օրինակ՝ փոխարինող ուսուցչի բացակայությունը և/կամ աշխատանք-վերապատրաստում համատեղելը), որ նա ներ է դնում մասնագիտական զարգացման համար, համարժե՞ք է նախատեսվող աշխատավարձի փոփոխությանը, թե՞ այն ավելին է, քան աշխատավարձի հավանական բարձրացման չափը:

Սրանք խնդիրներ են, որոնց եթե անդրադարձ չլինի, դժգոհությունները կշարունակվեն թե՛ ուսուցիչների կողմից, թե՛ աշակերտների ու նրանց ծնողների՝ ամրապնդելով կարծրատիպը, թե՝ «լավ ուսուցիչ այսօր չկա»:

---

[8] ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի ապրիլի 30-ի «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 7-ի N 1162-Ա/2 հրամանը Հանրակրթական հիմնական հաստատության՝ հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման չափորոշիչը և օրինակելի ծրագիրը հաստատելու մասին. էջ 5

[9] Տվյալները տրամադրել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը:

Հին ու փորձված մոտեցումներ հանրակրթության նոր ուղին Հայաստանում հարթելու համար

Իսկ ի՞նչ կարելի է անել՝ բարելավելու վերապատրաստման պրակտիկան: Վերապատրաստումների արդյունավետության տեսական և գործնական հետազոտությունները փաստում են, որ վերապատրաստումն ուսուցչի համար արդյունավետ է լինում միայն ու միայն այն դեպքում, երբ համադրված են **հետևյալ 4 բաղադրիչները**՝ (1) դասավանդման և սովորելու տեսությունների ըմբռնում, (2) իր դասավանդման մեջ փոփոխություն կատարելու վերաբերյալ հենց ուսուցչի կողմից ձևակերպված նպատակ, (3) դասավանդման մեթոդներ, որոնք մատուցվում են առնվազն երեք մեխանիզմներով՝ ա. մեթոդի բացատրություն և դրա կիրարկման օրինակի ներկայացում, բ. քննարկման և արձագանքման հնարավորություն, գ. ուսուցչի կողմից փորձարկելու մեթոդը փորձարկելու հնարավորություն և (4) նոր գիտելիքի և մեթոդների հետևողական կիրառման հնարավորություն՝ հետադարձ կապի մեխանիզմներով[10]: Չնայած հայաստանյան իրականությունում վերապատրաստման պրակտիկայում հիմնականում առկա են առաջին 3 բաղադրիչները, գրեթե իսպառ բացակայում է վերջինը՝ պրակտիկայում սովորածի կիրառությունը: Եղածն էլ դեռևս բավականին անարդյունավետ է, քանի որ հիմնականում նմանվում է իմիտացիայի, ոչ թե իրական սովորելու գործընթացի: Իսկ եթե չկա վերջին բաղադրիչը, միջազգային փորձը ցույց է տալիս, որ որևէ վերապատրաստում չի կարող փոխել ուսուցչի մոտեցումները և սովորույթները:

Հիմնվելով միջազգային լավագույն փորձի և հետազոտական եզրակացությունների վրա, **առաջարկվում է հետևյալ լուծումը**. թեթևացնել վերապատրաստման ծրագրի ծանրաբեռնվածությունը վերոնշյալ առաջին և երրորդ բաղադրիչներում և առավել շատ ժամանակ հատկացնել՝ մոտիվացնելու ուսուցիչին, որպեսզի նա ինքնուրույն սահմանի իր փորձի փոփոխության նպատակը և երկրորդ, համաչափորեն ներդնել նոր գիտելիքի և մեթոդների հետևողական կիրառման հնարավորություն: Օրինակ՝ 3-րդ բաղադրիչում ծանրաբեռնվածությունը կարելի է թեթևացնել, 5-ի փոխարեն ներառելով ընդամենը 2 նոր մեթոդ, և դասընթացից հետո այդ 2 մեթոդի կիրառումը հետևողականորեն դիտարկել վերապատրաստված ուսուցչի դասարանում: 4-րդ բաղադրիչի ներդրումը հնարավոր է մի քանի եղանակով՝ մենթորինգ, դասալսում, մեթոդական միավորման հետ տարվող աշխատանքներ, սոցիալական ցանցերում առկա ուսուցչական համայնքներում փորձառու ուսուցիչների, կրթության հետազոտողների և փորձագետների ներգրավում: Թերևս նշված եղանակներից ամենախնդրահարույցը Հայաստանում դասալսումն է, որովհետև այն պատմականորեն ընկալվում է որպես վերահսկման մեխանիզմ, մինչդեռ դասալսողն ուսուցչի հետ պետք է այնպես աշխատի, որ ուսուցիչն այն դիտարկի որպես սովորելու մեխանիզմ:

[10] Sims, S., Fletcher-Wood, H., O'Mara-Eves, A., Cottingham, S., Stansfield, C., Goodrich, J., Van Herwegen, J., Anders, J. (2022). *Effective teacher professional development: new theory and a meta-analytic test?* (CEPEO Working Paper No. 22-02). Centre for Education Policy and Equalising Opportunities, UCL. https://EconPapers.repec.org/RePEc:ucl:cepeow:22-02

Դասալսումը չպետք է վերածվի «հանդեսի», այլ այն պետք է ցույց տա, թե ինչպես են վերապատրաստման բոլոր 3 բաղադրիչները կիրառվում պրակտիկայում: Այս ամենն, իհարկե, համապատասխան բյուջեով:

Եվ թեև վերջում, բայց նույնչափ կարևոր է **հետևողական** վերապատրաստման գործընթացը: Եթե ուսուցիչը վերապատրաստվել է նոր մեթոդաբանությամբ, և դա ներածական վերապատրաստում է եղել, արդյո՞ք նա հնարավորություն ունի մասնակցել դրան հաջորդող ավելի խորացված վերապատրաստման, որպեսզի իր գիտելիքն ու հմտությունները տվյալ բովանդակությամբ խորանան:

Որպես ամփոփում կարևոր է նշել, որ նոր չափորոշչի ներդրումը, որը շեշտադրում է ուսուցչի և աշակերտի միջև որակյալ հարաբերությունները, կարողունակությունների վրա հիմնված կրթական գործընթացի կազմակերպումը, պահանջում է շարունակական ուշադրություն, գործնական փոփոխություններ վերապատրաստման մեխանիզմներում և հետադարձ կապի ակտիվ, գործուն մեխանիզմների առկայություն: Նոր պահանջների բավարարման համար անհրաժեշտ է մի կողմից խրախուսել ուսուցչին, օգնել նրան հստակեցնելու իր իսկ դասավանդումը բարելավելու սեփական մոտիվացիան և չհիմնվել միայն արտաքին մոտիվացիա վրա, ինչպիսին է, օրինակ, աշխատավարձի բարձրացումը, մյուս կողմից էլ նրան տրամադրվող աջակցությունը, մասնավորապես վերապատրաստումը, կազմակերպել որպես հետևողական, շարունակական, կարիքների վրա հիմնված, սխալների շտկման հնարավորություն ընձեռող գործընթաց: